№ 28 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 7 — 1896 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 7 № 28

ՔՍԱՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ., ամսական 1 բուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։ Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մահմէտականները ինքնավարութեան գործում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գիտակցական բարօրութիւն. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Թիւրքիայի դիրքը դէպի Ռուսաստանը. Արտաքին լուրեր.—ԽԱՒՆ ԼՈՒՐԵՐ. Գրողի Օրագրից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. – ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թիւրքիայի ծովեզերքից.

ՄԱՀՄԵՏԱԿԱՆՆԵՐԸ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ

—

„Մշակի“ 26-րդ համարում տպված լուրը՝ Շուշու թուրք ազգաբնակութեան՝ քաղաքային ինքնավարութեան հարցում բռնած դիրքի մասին, ստիպում է մեզ նորից դառնալ այն խնդրին, որը մենք յարուցինք „Մշակի“ 4-րդ և 5-րդ համարներում։

Մեր յօդուածների մէջ մենք այն միտքը յայտնեցինք, որ մեր երկրի մահմետական տարրը իր բարոյական և մտաւոր ստոր մակերեւոյթի պատճառով, դեռ պատրաստ և հասունացած չէ ըմբռնելու և իրագործելու քաղաքային ինքնավարութեան բոլոր բարիքները. հետեւաբար, երբ մահմետական ազգաբնակութիւնը կոչվում է քրիստոնեաների հետ հաւասար իրաւունքով մասնակցել քաղաքային ինքնավարութեան գործին, պէտք է այդ իրաւունքը այնպիսի պայմանների մէջ դնել և գործադրել տալ, որ նա չը վնասէ ինքնավարութեան հիմնական նպատակին։

Եւ ահա, աւելի շուտ քան թէ մենք սպասում էինք, քաղաքային ինքնավարութեան նոյն իսկ առաջին քայլերում, մեր երկրի մահմետական ազգաբնակութիւնը իր վարմունքով ցոյց տուեց, որ մեր յայտնած կարծիքը լոկ ենթադրութիւն չէր, այլ տխուր իրողութիւն։ Գանձակում և Շուշում կատարված ընտրութիւնների ժամանակ մահմետական ընտրողները ապացուցին, որ նրանք, քաղաքային ինքնավարութեան պէս մի ընդհանուր գործում, որտեղ չը պէտք է տեղի ունենան ոչ կրօնական, ոչ ազգայնական և ոչ դասակարգային նկատումներ, ղեկավարվում են միմիայն մի տեսակէտով,—ֆանատիկոս կրօնական տեսակէտով։

Ինչպէս բոլոր լրագիրները հաղորդեցին, Գանձակում թուրք ընտրողները անխտիր, առանց ի նկատի ունենալու ընտրվողի անհատական յատկութիւնները, սև քուէ էին տալիս քրիստոնեաներին և սպիտակ—մահմետականներին, իսկ Շուշում թուրք ընտրողների մեծամասնութիւնը—վաճառականական դասակարգը իր կրօնական և ֆանատիկոսութեան եռանդը հասցրել է մինչև այնտեղ, որ որոշել է սևացնել ոչ միայն բոլոր քրիստոնեայ կանդիդատներին, այլ և իր այն կրօնակիցներին, որոնք ամենայն խստութեամբ չեն պահպանում շարիաթի պատուէրները և հաղորդակցութիւն են ունենում քրիստոնեաների հետ, նրանց հետ սեղանակից լինելով։

Այդպիսի վերաբերմունք ոչ միայն անարդար է, ոչ միայն չէ համապատասխանում քաղաքային ինքնավարութեան շահերին, այլ և նա կարող է ուղղակի անդամալուծել քաղաքային ինքնավարութեան գործը և նրան հէնց իր սաղմի մէջ խեղդել։ Քաղաքային ինքնավարութեան կանոնադրութիւնը յարմարեցրած է ընդհանուր պետական և կուլտուրական պահանջներին. նա ի նկատի ունի միայն քաղաքային բարեկարգութիւնը, այն է քաղաքի բնակիչների նիւթական, անտեսական, առողջապահական, մտաւոր և բարոյական վիճակի բարւոքումը, ուրեմն նա ձգտում է պաշտպանել ամբողջ ազգաբնակութեան շահերը, առանց ազգի, կրօնի և դասակարգի խտրութեան։

Պարզ է ուրեմն, որ այդ հիմնական նպատակին հասնելու համար քաղաքային ինքնավարութեան գործը վարողները պէտք է վերոյիշեալ պահանջներին համապատասխան տեսակէտով ղեկավարվեն. իսկ եթէ նրանք կը ղեկավարվեն միայն մի այնպիսի վնասակար տեսակէտով, ինչպիսին է ֆանատիկոս-կրօնականը, այն ժամանակ ինքնավարութեան բարիքները երբէք չեն կարող իրականանալ մեր երկրում։

Մենք ամենևին չենք պահանջում, որ մահմետական ազգաբնակութեան իրաւունքները կրճատվեն կամ սահմանափակվեն. իբրև քաղաքացիներ, նրանք ևս պէտք է վայելեն այն բոլոր իրաւունքները, որոնք բղխում են օրէնսդրութիւնից. բայց այդ իրաւունքները, ինչպէս անցեալ անգամ էլ յայտնեցինք, պէտք է դրվեն այնպիսի սահմանների և պայմանների մէջ, որ չը կարողանան արգելել և անդամալուծել ինքնավարութեան կանոնաւոր զարգացումը և հիմնական նպատակը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ԲԱՐՕՐՈՒԹԻՒՆ

II

Անհատի բարօրութիւնը հիմնված է այն ոյժերի և ընդունակութիւնների վրա, որոնց նա կարող է գործադրել իբրև աշխատող, արտադրող մարդ։ Ամեն մէկը բնութիւնից ստացած ունի ոյժեր և ընդունակութիւններ։ Կատարելապէս զրկվածների թիւը շատ չնչին է, շատ աննշան։ Զանազանութիւն կայ, ի հարկէ, ոյժերի և ընդունակութիւնների չափի և քանակութեան մէջ։ Բայց այդ տարբերութիւնը, որ անհատներին տալիս է տարբեր միջոցներ ապրուստի համար, նշանակութիւն չունի։ Հաւասարապէս յարգելի են այն բոլոր անհատները, որոնք իրանց ոյժերի և ընդունակութիւնների գործադրութեամբ աշխատում են այնպէս, ինչպէս վայել է մարդուն։

Սեփական ոյժերի և ընդունակութիւնների չահագործումը սեփական բարօրութեան համար,—այս է այն արդար միջոցը, որ ընդունում է մարդկութիւնը։ Այդ տեսակէտից ամեն մի անգործութիւն, լինի նա թէկուզ աղքատի անգործութիւնը, դատապարտելի է, վնասակար ոչ միայն անհատի, այլ և հասարակութեան բարօրութեան համար։—Մարդը սոսրանում է, բարոյապէս ոչնչանում է, երբ սկսում է իր գոյութեան իրաւունքը հիմնել այն ազդեցութեան վրա, որ կարող է թողնել իր նմանների սրտի վրա։ Մարդկային արժանապատուութիւնը վիրաւորում է այն հանգամանքը, որ թշուառութիւնը անբուժելի է համարվում և մի տեսակ ճրիակերութեան արտօնութիւն է դառնում։ Հասարակութիւնը իրաւունք ունի զրկել այդ արտօնութիւնից ամեն մէկին, եթէ միայն ճանաչէ իր պարտականութիւնը։

Ահա թէ ինչպէս։

Նախ և առաջ նա պիտի տոգորվի այն գիտակցութեամբ, որ անկարող, թուլամորթ անհատների դրութիւնը թուլացնում է հասարակութեան բարօրութիւնը, որը անհնարին է, եթէ չէ հիմնված հասարակութեան կազմող բոլոր անհատների բարօրութեան վրա։ Առաջնորդվելով այդ սկզբունքից, հասարակութիւնը պիտի գործադրութեան հրաւիրէ այն ոյժերն ու ընդունակութիւնները, որոնք անհատների բարօրութեան հիմքն են կազմում։ Նա պիտի վերացնէ ջղերի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱՅԻ ԾՈՎԵԶԵՐԲԻՑ

XIII

Մահմետական կղերականութիւնը կամ իւլէմա

—

Եէնիչէրիներից յետոյ մնում էր բէկթաշի կոչված դէրվիշների կարգը, որ նախ գաղտնի և ապա հետզհետէ աւելի ու աւելի բարձր սկսեց աղմկվել, ապստամբել և ժողովուրդը գրգռել՝ գեավուրներից առնված օրէնքների, գեավուր բայեաններին (հպատակ) խոստացված հաւասարութեան և վերջապէս նոյն ինքը գեավուր դարձած սուլթանի դէմ։ Այժմեան սօֆթաների նման, այդ դէրվիշներն էլ միշտ գերակշռող դեր էին ուզում ունենալ պետական գործերում և ամեն մի նորամուծութեան ընդդիմանում էին։ Բէկթաշիների խումբը և եէնիչէրիների գունդը՝ գրեթէ մի և նոյն ժամանակ էին հիմնված։ Այդ դէրվիշների կարգի հիմնադիր Հաջի Բէկթաշն էր, որ օրհնում էր 1328-ին նորակազմ եէնիչէրիների ջոկատի դրօշակը։ Եւ իրերի զարմանալի զուգադիպութեամբ, այս երկու վայրենի կազմակերպութիւնները միասին և մի և նոյն ժամանակ էլ պիտի ոչնչանային։—Սուլթան Մահմուդ այդ ՀԷՍԱԿԱՐ տարրից էլ մի անգամ ընդ միշտ ազատվելու համար՝ միւֆթիի և այլ իւլէմայի ձեռքով նրանց դէմ էլ մի ֆէթվա հանել տուեց, չը նայելով որ դէրվիշները յանուն իսլամութեան պահպանման էին բողոք բարձրացրել, և այդ կրօնամոլներից զըլխաւորներին, այն էլ հրապարակով, գլխատելուց վերջ, մնացածներին էլ մեծ մասով աքսորեց և հրամայեց նրանց թէքքէները (վանատունները) հիմնայատակ անել։ Սակայն նրա հրամանները անթերի չը կատարվեցան կամ նա չը կարողացաւ լրացնել սկսած գործը, և դէրվիշները այսօր էլ կան ու արծարծում են մահմետական ամբոխի մէջ ամենակոյր մոլեռանդութիւն։

Ահա այս կերպով, այն ժամանակ չնորհիւ Մահմուդի զօրեղ կամքի, նախաձեռնող և կըրթիչ ոգու ու հաստատամտութեան, ծրագրված բարենորոգումները կարողացան մուծվել և չը մոռանանք, որ այդ այն միջոցին էր, երբ բովանդակ յոյն ազգը ոտքի էր կանգնած և մահվան ու կեանքի կռիւ էր մղում և միանգամայն սարսափելի ջարդ կրում։ Այս յունական ջարդերը, ինչպէս պատմութիւնից յայտնի է, վերջացան Յունաստանի անկախութեամբ՝ Լօնդոնում կազմված դեսպանական պրոտոկոլների համաձայն (1830-ին). բայց որպէս զի գործն այս եզրակացութեան յանգէր, և բարբարոս իշխանութեան ներքև հեծող յոյն քրիստոնեայ ժողովուրդը ազատութիւն գտնէր, հարկ եղաւ որ նախ Ռուսաստան, Անգլիա և Ֆրանսիա միջամտեն և ապա մի պետութիւն էլ՝ այն է Ռուսաստան՝ պատերազմ հրատարակէ Թիւրքիայի դէմ...

Սուլթան Մահմուդ՝ իր վերոյիշեալ հսկայական քայլից յետոյ սկսեց իր վեղիր Բէշիդ փաշայի ձեռքով՝ իրագործել բարենորոգումների ծրագիրը։ Նշանաւոր են նրա հետեւեալ խօսքերը՝ «Ես սրանից յետոյ մահմետականներին ճանաչում եմ մզկիթում, քրիստոնեաներին եկեղեցում և հրէաներին սինագոգում։» Այս խօսքերը, որոնք ցոյց են տալիս թէ Մահմուդի համար իր հպատակները կատարելապէս հաւասար էին, առանց ծագումի և կրօնի խտրութեան, արտասանված են մեզանից 65 տարի առաջ և երանի էր թէ այժմ էլ գործադրվէին Թիւրքիայում այն հաստատութեամբ, որով արտասանում էր վերանորոգիչ սուլթանը։ Այս խօսքերի արդիւնքն էր, որ քանի մի տարի վերջը, երբ արդէն Մահմուդ չը կար, Աբդիւլ Մէջիդի (Մահմուդի որդու և Աբդիւլ Համիդի հօր) օրով հրատարակվեցին նախ՝ նշանաւոր՝ Գիւլխանէի Խաթթի-շէրիֆը (1839), որ քաղաքական հաւասարութիւն էր չնորհում բոլոր հպատակներին, առանց խտրութիւն դնելու իսլամի և ոչ—իսլամի մէջ, և ապա 5 տարի վերջը, Թանզիմաթը Խայրիյէն (նշանակում է «բարի կազմակերպութիւն»), որով Թիւրքիան ստանում էր նոր քաղաքական կազմակերպութիւն, եւրոպականի վրա ձեւված, նոր օրէնքներ չէրիաթից դուրս, յատկապէս ֆրանսիական code-ից քաղված, և ընդհանրապէս, գէթ ըստ արտաքին երեւոյթին, փոքր ի շատէ բովանդակում էր այն ամենը, որ յատուկ էր մի եւրոպական պետութեան։

Ուրեմն դարիս առաջին քառորդին էլ, Թիւրքիայում բարեկարգութիւն մուծանելու համար հարկ էր եղել երկու տարբ վերջնականապէս ընկճել.—վայրենի, անկանոն զօրքը և մոլեռանդ կրօնականները։ Բայց Թիւրքիայի հանգամանքները այնպէս են, որ այդ երկու տարրերը տարբեր ձեւերի տակ և ժամանակի պարագաներին փոքր ինչ աւելի համապատասխան եղանակով, դարձեալ երևան են գալիս՝ յանձին վայրենի քիւրդ համիդեականների և մոլեռանդ սօֆթաների։—Այս վիճակում, ամեն ինչ կախված է լինում սուլթանի անձնական հաստատամտութիւնից, զօրաւոր կամքից և նրա չրջապատող խորհրդատուների հայեացքից։ Առաջները՝ բնականապէս սուլթանները այնքան չէին նաղ անում իրանց կամքին հակառակող չէյխ-իւլ-իսլամների հետ։ Սուլթաններից մէկը՝ մի անհնազանդ կրօնականին հրամայեց սպանել, և որովհետև իսլամական օրէնքը արգելում էր կրօնական անձի արիւնը թափել, հետևապէս դահիճները՝ նրա գլուխը սանդի մէջ ծեծելով մահացրին նրան։

Մենք չատ լաւ յիշում ենք, որ վերջին ռուս-թրքական պատերազմի ժամանակ սօֆթաները սկսել էին դարձեալ կատաղի խլրտում և անհանդարտ, մինչև անգամ ապստամբական չարժում կատարութեան դէմ։ Եւ կառավարութիւնը՝ նրանց՝ խմբերով բռնեց ուղարկեց Կոտի դաշտը, ուր նրանք ռուս գնդակների զոհ դառնալով չէ հիդ (մարտիրոս) լինելու արժանի եղան, իսկ մի մասն էլ գիշեր ժամանակ տանեակներով հաւաքում և ձեռք ու ոտքերը կապած Բոսֆորի ձկներին կերակուր էին չինում, թէև երբեմն Բոսֆորը՝ հետևեալ առաւօտ այդ խեղված դիակները յետ էր տալիս Կ. Պոլսի ափերին...

Սրանից մօտ 30 տարի առաջ, սուլթանների մէջ առաջին և միակը, սուլթան Ազիզ, ցանկացաւ Եւրոպա գնալ, այցելել Պարիզ, բայց չէյխ-իւլ-իսլամը ֆէթվա չէր տալիս. այն ժամանակ, Ազիզը նրան պաշտօնանկ արեց. նրա յաջորդը նոյնպէս հակառակվեց. նա էլ պաշտօնանկ եղաւ և վերջապէս երրորդին աջողվեց կուրանի մէջ

և սրտի վրա գործած ազդեցութեան արհեստը և պիտի մտածէ, որ այդ արհեստով պարապվող բազմութիւնը պէտք է վերադարձնել ազնիւ աշխատանքով ապրող մարդկութեան գիրկը: Այն ժամանակ իւրաքանչիւր տեսակի անձաւ, բնութիւնից զրկված մարդ ուղղված կը լինի դէպի այն շրջանը, ուր կարող կը լինի շահագործել իր սեփական մտաւոր և ֆիզիքական կարողութիւնները իր բարօրութեան համար: Հասարակութեան պարտականութիւնը այդ դէպքում կը լինի այն, որ նա աշխատելու տեղեր կը պատրաստէ:

Ուրիշ հնար չը կայ: Մարդկային թշուառութիւնը մի անհուն ծով է: Ոչ ժամանակաւոր միջոցները, ոչ սրտի փափկութիւնը չեն կարող արմատախիլ անել այն սոսկալի խոցը, որ կրծում է հասարակութեան կազմուածքը, որ երբէք թոյլ չի տայ հասարակութեան հանել բարօրութեան: Բարեգործութեան հասկացողութիւնը պէտք է յեղաշրջել: Բարեգործութիւն, ողորմութիւն պէտք է համարել ոչ թէ այն դրութիւնը, երբ մարդը հարստահարում է ձեր սիրտը իր թշուառութիւնների ամբողջ ցնցող զէնքերով և դուրս է գալիս ձեր գրպանից մի քանի փշրանքներ, այլ այն գործը, որ միջոց կը տայ իւրաքանչիւր թշուառին տեսական, ազնիւ աշխատանքի իրաւունքով ապահովել իր գոյութիւնը, մի կտոր հացի տէր դառնալ,—մի միջոց, որով նա կը բարձրանայ ստորութեան, տանջանքների մշտական խաւարի այն անդունդից, որի մէջ կուլ է գնացել մուրացկանութեան աշխարհը: Դրանով ազատված կը լինի մարդկային պատիւը, մի պատիւ, որ հաւասարապէս պատկանում է թէ նրան, որ մուրում է և թէ նրան, որ տալիս է փշրանքներ: Այդ դէպքում իւրաքանչիւր պատահար, որ զրկում է մարդուն որ և է անդամից, անտանելի թշուառութիւն չէր համարվի և Ղնասվածը կունենար իր սրտի մէջ այն գիտակցութիւնը, որ նա կը շարունակէ մնալ նոյն ազնիւ աշխատաւորը, նոյն պատուաւոր մարդը, որ գործադրում է բնութիւնից իրան տուած կարողութիւնը իր սեփական ապրուստի համար:

Ահա իսկական բարեգործութիւնը: Դուք տալիս էք աշխատելու միջոց, հնարաւորութիւն: Իսկ այդ միջոցներից օգտվողը տալիս է ձեզ իր աշխատանքը. նա այժմ արտօնված ձրիակեր չէ, նա կարող է վերադարձնել ձեզ նիւթի արժողութիւնը, իսկ շահը գործադրել իր ապրուստի համար: Այստեղ չը կայ այլ ևս անհատների հոգեկան տրամադրութիւն, շահագործվող թշուառութեան այս կամ այն ատիճանը, ողորմութեան այն ընթացիկ հասկացողութիւնը, որ ապագայ բարիքներ է ենթադրում հոգու համար: Այստեղ պահանջվում է գիտակցութիւն, մի պարզ «հաւատամք», որ ամեն մէկը իր սեփական բարօրութեամբ պիտի նպաստէ հասարակութեան բարօրութեան, իսկ այս վերջինը հնարաւոր է միայն այն դէպքում, եթէ հասարակութեան բոլոր անդամները չեն զրկված իրանց ոյժերն ու ընդունակութիւնները չահագործելու կարողութիւնից:

Մի քանի օրինակներ կարող են մեզ լաւ ցոյց տալ այս ընդհանուր տեսակէտի ճշմարտութիւնը: Այդ օրինակներին մենք կը դիմենք յաջորդ անգամ:

Լ.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 4-ին

«Արձագանքը» պատասխանեց իմ առաջարկութեան, որ տպված էր «Մշակի» 26-րդ համարում: Նա ասում է, որ «ամենայն պատրաստակամութեամբ» ընդունում է իմ պայմանս՝ որ պատասխանս տպագրվի «Արձագանքի» էջերում. միայն ցաւելով յայտնում է, որ իմ երկրորդ պայմանը, այն է, որ իմ պատասխանս անփոփոխ տպագրվի՝ նա անկարող է ընդունել, այլ գրութիւնս կենթարկէ «փոփոխութեանց, սրբագրութեանց և կրճատումների»: Այս ասելուց յետոյ «Արձագանքը» դեռ յոյս է յայտնում, որ իր այս առարկութիւնը ես պատրուակ չեմ բռնի, և նրան չեմ զրկի իմ պատասխանս տպելու վայելչութիւնից...

Ցաւում եմ սակայն, որ չեմ կարող արդարացնել «Արձագանքի» յոյսը, և ստիպված եմ նրան զրկել իմ պատասխանն աղճատելու վայելչութիւնից: Եթէ նա յանձն կառնէ անփոփոխ տպել իմ պատասխանը՝ ես կուղարկեմ: Սրանով «Արձագանքը» չէ զրկվում իր իրաւունքից՝ առանձին յօդուածների և ծանօթութիւնների մէջ հերքել և հայհոյել ինձ՝ որչափ ոյժ ունի. բայց նա պէտք է թոյլ տայ իր ընթերցողներին՝ կարդալ իմ պատասխանս այնպէս՝ ինչպէս ես կը գրեմ. և ես վստահ եմ, որ այդ ընթերցողները անհամեմատ վայելուչ կը գտնեն իմ պատասխանս՝ քան սովոր են կարդալ «Արձագանքի» խմբագրական յօդուածներում:

Սրանով պէտք է վերջացնէի նամակս: Բայց «Արձագանքը» ըստ իր սովորութեան, պարզ հարցը կողմնակի խնդիրներով խճճելու նպատակով, մի շարք վայրիվերոյ խօսքեր է ուղղել ինձ դէմ, որոնց հարկ եմ համարում մի քանի տողով պատասխանելու: «Արձագանքի» խմբագիրը յայտնագործում է, որ երբ ես «նոր էի երևացել Թիֆլիսի հօրիզոնի վրա և հայոց լեզուի մէջ «նէ» (она, elle) խօսքը մտցնելու ապարդիւն ջանքեր անելուց յետոյ ձգտում էի հայոց լեզուի ուսուցչի պաշտօն ձեռք բերել, իմ լեզուագիտական էկսպերիմէնտներն անելու համար՝ ինքը Ներսիսեան հոգևոր դպրանոցի ազդեցիկ հոգաբարձու լինելու պատիւն ունէր, և ես բնականապէս սկսեցի «Արձագանքին» աչխատակցել:»—Այդ «ազդեցիկ» հոգաբարձուն, եթէ բարեխիղճ եղած լինէր՝ ի հարկէ, թոյլ չը պիտի տար, որ ես Ներսիսեան դպրոցը մտնէի իմ էկսպերիմէնտներն անելու համար, քանի որ նա արդէն տեսել էր և գիտէր իմ ապարդիւն լեզուաբանական ջանքերս: Բայց վերոյիշեալ ամբողջ մեղադրութիւնը հիմնովին յեղաշրջված է: Ներսիսեան դպրոցում իմ պաշտօն վարած ժամանակ (1890 թ-ից) «Արձագանքի» խմբագիրը չորս տարի «ազդեցիկ» հոգաբարձու է եղել (մինչև 1894 թիւը): Այս չորս տարվայ ժամանակամիջոցում ես «Արձագանքին» աչխատակցել եմ միայն կէս տարի (1891 թ-ի առաջին կէսում, ուրեմն արդէն ուսուցիչ եղած ժամանակս), երբ այդ լրագրի տնօրէն յայտարարված էր պ. Յարոն, իմ պաշտօնակիցս դպրոցում, սրա յատուկ խնդրանքը: Այս կէս տարուց յետոյ Ա. Յովհաննիսեան դարձեալ երկու և կէս տարի շարունակեց մնալ ազդեցիկ հոգաբարձու, բայց ես ոչ միայն «Արձագանքին» չաչխատակցեցի, ոչ միայն յանձն չառայ մի «երկու տող» մատենախօսական յօդուած գրել «Արձագանքում», մինչ այդ բանը մի քանի մարդկանց միջոցով և անձամբ խնդրում էր Ա. Յովհաննիսեան, այլ նոյն իսկ քանիցս անգամ խիստ բանակռիւներ ունեցայ նրա դէմ, en touttes lettres ստորագրելով անունս յօդուածներիս տակ:

Յետոյ դուրս է գալիս, որ իմ աչխատակցութեան ժամանակ ես իբր թէ «սիրով, նոյն իսկ երախտագիտական զգացմունքներով ենթարկվում էի նրա խմբագրական գրչին. այս գրիչը ստիպված էր անխնայ գործել, նա պէտք է սանձահարէր իմ կրքերս, ջնջէր չռայլած չողոքորթութիւններս:»—Այս խօսքերին մենք միայն մի պատասխան ունենք տալու.—դա զրպարտութիւն է:

Գալով «Արձագանքի» վերջին, գրական տեսակէտից անվայել ակնարկութիւններին՝ ես այսքան կասեմ, թէ ես յաւակնութիւն չունեմ պահանջելու, որ ինձ յարգեն ճեմարանի բոլոր նախկին ընկերակիցներս (կան այնպիսի էակներ, որոնց յարգանքը ամենամեծ անարգանք կը համարէի ինձ համար): Իսկ «Պետերբուրգի բարերարներին» թող հանգիստ թողնէ «Արձագանքը». ես չէի ցանկայ նրանց մասին մի բան գրել: Զգուշացնում եմ «Արձագանքին»՝ չարձագանքել այնպիսի պարբերութիւն, որով Մահմմէդի խալիֆը կարող էր «անհաւատների» հողի վրա ոտք կոխել, առանց իսլամական կրօնի հակառակ գործած լինելու. այս գիտով թէ նա մնաց չէյխ-իւլ-իսլամ և թէ Աբդիւլ-Ազիզ գնաց Եւրոպա:

Բայց ինչ է իսկապէս իւլէման և ինչումն է նրա ոյժը:

Ինչպէս մեր յօդուածի սկզբումն էլ յիշեցինք, իսլամի ոգու և արամադրութեան համաձայն, հոգևորականութիւնը, կղերը որոշ, առանձին դասակարգ չը պիտի կազմէ, ինչպէս այդ կայ քրիստոնէութեան մէջ, այլ նա պիտի լինի միայն սուրբ գիրքը մեկնող և այնտեղ, ուր մասնաւոր անձինք անհմուտ են կրօնական արտաքին պաշտամունք կատարելում, կարողանայ ինքն կատարել: Նոյն ինքն իւլէմա բառը, որ ընդհանուր տամունք կատարելում, կարողանայ ինքն կատարել: Նոյն ինքն իւլէմա բառը, որ ընդհանուր կոչումն է մահմեդական կղերի, իր բառական իմաստով ապացուցանում է, որ սկզբում այդ է եղած նրա raison d'être: Հաւատարիմ մուսլիմանի համար Մահմեդի դաւանութիւնը իր մէջ ամեն ինչ բովանդակում է,—թէ գիտութիւն, թէ արդարութիւն և թէ քաղաքականութիւն. և այս բոլորը ենթադրվում է սուլթանի անձնաւորութեան մէջ, որ այդ դաւանութեան վերին ներկայացուցիչը և դատաւորն է, իբրև յաջորդ կրօնի հիմնադիր մարգարէի:—Իսկ սուլթանը իր կողմից կարող է իր իշխանութեան այս կամ այն մասը յանձնել ուրիշի, միշտ ինքը մնալով գլխաւոր վճռաւոր:—Ինչպէս բացատրեցինք, իւլէման կարողացած է այնպիսի դիրք բռնել Թիւրքիայի ամբողջ տեղութեան ժամանակ, որ սուլթանը ըստ կուրանի իրան յատկացված և վերապահված իշխանութեան զանազան մասերը, որոնց մէջ կարևորագոյնը ֆէթվան է, տուած է իւլէմային, որով և այս վերջինը ներկայանում է այսօր իբրև անհրաժեշտ ուսուցիչ և դատարակ՝ դիտութեան տաճարներում, միակ դատաւոր՝ արդարութեան աթոռի վրա և անպայման խորհրդական և կրօնական հանող՝ արտաքին քաղաքականութեան մէջ:

Ինչպէս է դատարակվում իւլէման: Նախ պէտք է ասենք, որ Թիւրքիան՝ չնորհիւ կուրանի հիմնական սկզբունքի, դասակարգային բաժանումների երկիր չէ և հասարակ գիւղացու որդին կարող է՝ եթէ ընդունակ է կամ պաշտպան ունի, բարձրանալ մինչև չէյխ-իւլ-իսլամի և սադրազամի (մեծ վիզիր) պաշտօնը: Ուստի իւլէմայութեան համար պատրաստվող աշակերտների ստուարագոյն մասը շատ անգամ հասարակ դասից է հաւաքվում: Աշակերտը գնում է նախ փոքր մզկիթին կից հաստատված ծխական դպրոցը 10—11 տարեկան հասակում և 3—5 տարի այնտեղ մնալուց յետոյ անցնում է մեծ մզկիթի ուսումնարանը, մէդրէսէ, մահմեդական կղերանոցը, 13—16 տարեկան, և մնում է այդտեղ ամբողջ 10 մինչև 12 տարի և այն ժամանակ նա կոչվում է սոֆթա: Սոֆթաները՝ փսիաթների, կամ խոտի բաղմոցների վրա ծալապատիկ նստած՝ անընդհատ մէջքերն ու գլուխները երերցնելով սկսում են բարձր ձայնով կարդալ և սովորել նախ քերականութիւն արաբերէն և ապա կրօնական գիտութիւններ, որոնց լրումն է կուրանը և սիւննան: Ամեն մի մէդրէսէի մօտ կան իմարէթներ, որոնք բարեգործական հաստատութիւններ են, մզկիթների հաշուով պահվող և որոնք կերակրում են սոֆթաներին: Իսկ ապրուստից դուրս հարկաւոր եղած ծախքերը սոֆթաները պէտք է իրանք հոգան, իրանց սեպհական միջոցներից, և որովհետև նրանց մեծագոյն մասը չքաւոր են, հետևաբար ստիպված՝ կամ հասարակաց դրագրութիւն*) են անում, կամ զանազան թրքական և արաբական ձեռագիրներ են օրինակում մէկի կամ միւսի համար և կամ մզկիթի մօլլային օգնում մզկիթը աւելելու, մաքրելու և այլն, և այս կերպով կարողանում իրանց ծախքի մի մասը հոգալ: Բայց Թիւրքիայի կրօնական պաշտօնեաների մեծ մասը դաւառներում՝ և ոչ իսկ սոֆթայութեան դասարաններում մտած: Այն բոլոր իմամները, մուէզզինները, քայիմները, որոնք գործում են ժողովրդեան մէջ, կամ սկզբնական դպրոցից են դուրս եկած և կամ առ առաւելն սոֆթայութեան առաջին տարիներից, որով և շատ անգամ հաղիւ կարդանում են պարզ թիւրքերէնը կարդալ կամ գրել անթիւ սխալներով, գաղափար անգամ չունեն արաբերէնի վրա, բայց յաւակնութիւն ունեն՝ արաբերէն գրված կրօնական գրքերից բերանացի արած հատուածներ մեկնաբանել: Արդէն այդ իմամներին, մուէզզիններին և քայիմներին ըստ ինքեան իւլէմայի կարգն էլ չեն դասում:

Իւլէմայի կարգը մտնելու համար պէտք է սոֆթան վերջացնի մէդրէսէի դասընթացքը: Առաջին ատիճանը, որ տրվում է ընթացավարտ սոֆթային՝ միւլազիմութիւնն է. միւլազիմը կարող է լինել խաթիբ (մզկիթում՝ յանուն կամ ի դիմաց սուլթանի, ուրբաթի աղօթքը—խուտբէ կարդացող), նաիբ և կադի, (դատարանում չէրիաթի ներկայացուցիչ և դատաւոր): Միւլազիմն աւելի բարձր պաշտօն ձեռք բերելու համար, դարձեալ 6—7 տարի պէտք է շարունակէ իր ուսումը մահմեդական իրաւագիտութեան, բարոյագիտութեան և փիլիսոփայութեան դասերով և ընդունի միւդէրրիսի ատիճանը, որ երկրորդ դասն է համարվում իւլէմայի: Միւդէրրիսներից են լինում միւֆթիները (օրէնագէտ, կամ ֆէթվա արձակող) և բուն չէյխերը:

Միւդէրրիս նշանակում է արաբերէն՝ դասատու և իրօք սրանք են ամեն տեղ իբրև լեզուի և գիտութեան ուսուցիչ և կրօնասոյց տիրողները. սրանք են իւլէմայի մեծագոյն ոյժը կազմողները: Միւդէրրիսները հետզհետէ առաջանալով իրանց պաշտօնավարութեան մէջ, կարող են բարձրանալ մինչև իւլէմայի ամենաբարձր ատիճանները, մինչև չէյխիւլիսլամ, որին ընտրում է սուլթանը:

(Կը շարունակվի)

*) Կ. Պոլսի թիւրքաց օքսումուչ (կարդացող), այսինքն՝ իրանց մտքով ուսում առած մարդկանց գլխաւոր պարապմունքներից մէկն էլ հասարակաց դրագրութիւնն է: Այս քեաթիբները (դրագիրը) Կ. Պոլսի ամենից ընտրոյ տիպերից մէկն են ներկայացնում: Ամեն մի մզկիթի, բայց մանաւանդ ամեն մի փոստատան կողքին, դրան առաջ շարված են տամնեակներով մօլլաներ այդ տեսակից,—փոքրիկ, ցած ամբոի վրա նստած, առջեր մի աւելի ցած փոքր սեղան, որի վրա միայն թուղթ և թանաք, գրիչ դնելու տեղ կայ, կամ միւշթէրիի են սպասում և կամ կէս թերթ թուղթը ձեռքի մէջ և ծնկների վրա առած, ըստ թրքական կարգի, ճչացնելով արագ արագ գրում են իրանց մօտ ծալապատիկ նստած կամ հողի վրա ծնկաչոք գեղացու պատուիրած նամակը: Դրանք այնքան վարժ են արդէն նամակների տեսակներում էլ, որ մի քանի տեսակները միշտ գրած պատրաստ ունեն իրանց մօտ և առաջին հանդիպողի վրա ծախում են, իսկոյն անուն և թուական միայն աւելացնելով:

նում Շահլամեանից, որով նա խնդրում է՝ «շատ չուտով ուղարկել իրան ուսանողութեան վրա մնացած պարտքը՝ 130 ր.», որ նախկին 70 ր. հետ կանի 200 ռուբլի։

Երգիչը աւելացնում է. «Եթէ խարկովցիները (Խարկովի ուսանողներ) կարողացան այդքան վճարել և գնահատելու չափ յարգել, պատւել, արժանաւոր ընդունելութիւն ցոյց տալ և ճանապարհել,—դուք՝ Պետերբուրգի հայ ուսանողներդ, ինչի՞ չը պիտի կարողանաք գոնէ պարտքի մի մասը լրացնել. թողէք մի կողմը, որ խարկովցիները ձեր երեկոյթի ընդհանուր մուտքի մի երրորդ մասը հազիւ ունենում են»։

Նամակը շատ վատ տպաւորութիւն թողեց ուսանողների վրա։ Շատերը կարծում էին, որ կարգադրիչ-ուսանողները պայմանաւորվել են նրա հետ՝ 200 ր. տալու, որովհետև այդպիսի լեղուով 200 ր. կարող է պահանջել միայն այն մարդը, որին արդէն խոստացել են տալ։ Բայց հարց ու փորձից երևաց, որ այդպիսի պայման բոլորովին չէ եղել։

Եթէ Շահլամեան Մոսկվայում ունէր այնպիսի «իր գործերը, իր շահերը», ինչպէս գրել է, որոնք պէտք է տուժէին Պետերբուրգ գալովը, այն ժամանակ աւելի լաւ չէր լինի նախազգուշացնել ուսանողներին և պայմաններ առաջարկել։ Նրանք կունենային այնքան քաղաքավարութիւն, որ չէին զրկի երգչին «իր շահերից», կազատէին տուած խոստումից։ Դա երբէք մեղադրելի չէր լինի, քանի որ միշտ պատահում են այդպիսի դէպքեր։ Բայց ոչ մի պայման չառաջարկել և երեկոյթից յետոյ յանկարծ գալ և ասել՝ «դուք ինձ 200 ր. էք պարտական,—այդ մեղադրելի է։ Եթէ խարկովցիները տուել են, այդ չէ նշանակում, որ պետերբուրգցիներն էլ պէտք է տան։ Իւրաքանչիւր կրթված արտիստ թոյլ չը պէտք է տայ իրան վարձ վերցնել բարեգործական նպատակով տրվող երեկոյթից (խօսքը ճանապարհածախսի մասին չէ), թոյլ չը պէտք է տայ աւելորդ կօպեկներ խլել չքաւոր ուսանողներից, այն էլ հայրենակից ուսանողներից։ Օտարազգիները մեզ մօտ ձրի են մասնակցում։

Յովհ. Մեղն.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լսում ենք, որ Կովկասեան կառավարչապետ Շերեմետեվի և Թիֆլիսի նահանգապետ իշխան Շերվաշիձէի մի քանի հիմնական զեկուցումները Կովկասի և տեղական հարցերի մասին՝ հաւանութիւն են գտել կառավարչական բարձր շրջաններում։

—

Մի գեղեցիկ օրինակ հայ հարուստներին.— Մոսկվայի զրաղիտական կոմիտեը մի անյայտ անձից ստացել է 50,000 ռուբլի նուիրատուութիւն, գիւղական ձրի գրադարանների, կիրակնօրեայ դպրոցների, ժողովրդական հրատարակութիւնների և ուրիշ ծախսերի համար։

—

Թիֆլիսի քաղաքային դումայի մարտի 4-ի նիստում քաղաքագլուխը յիշեցրեց դումային, որ գարունը հասնելուն պէս «Սաղ» անուանված քաղաքամասը, որ գտնվում է Կուրի ափին, կարող է կատարելապէս հեղեղվել, որովհետև ամենքը սպասում են Կուրի մեծանալուն։ Մի և նոյն ժամանակ նա մատնացոյց արաւ այն հանգամանքի վրա, որ ոստիկանութիւնը ոչինչ միջոցներ չունի դժբաղդութեան ժամանակ քաղաքի ստորին մասերի բնակիչներին օգնութիւն հասցնելու և նրանց դոյքը ազատելու համար։ Ի նկատի առնելով այդ, քաղաքագլուխը առաջարկեց դումային 600 ր. նշանակել վեց նաւակներ և այլ անհրաժեշտ իրեղէններ ձեռք բերելու համար և 400 ր. դնել քաղաքային վարչութեան տրամադրութեան տակ՝ հեղեղից վնասվածներին օգնութիւն հասցնելու համար։ Զայնաւոր Միքայէլ Թամամշեանը համակրութեամբ վերաբերվելով այդ առաջարկութեանը, ասում է՝ թէ հարկաւոր է մի հնար դտնել, որպէս զի կարելի լինի «Սաղ» քաղաքամասը ընդ միշտ ապահովել հեղեղներից և այդ պատճառով նա առաջարկում է այդ հարցը մշակելու համար մի յանձնաժողով ընտրել։ Դուման ընդունեց քաղաքագլխի առաջարկութիւնը և մի և նոյն ժամանակ որոշեց ձայնաւոր Մ. Թամամշեանցի յարուցած հարցը յանձնել մի յատուկ յանձնաժողովի այն պայմանով միայն, որպէս զի այդ հարցը նախապէս մշակվի վարչութեան կողմից։

—

Վրաց «Իվերիա» լրագիրը Պետերբուրգից տեղեկութիւն է ստացել, որ մի առանձին խորհրդակցութեան մէջ, որին մասնակցում էին և մինիստրները, հաւանութիւն գտաւ և ընդունվեց Թիֆլիսի նահանգապետ իշխան Շերվաշիձէի նախագիծը՝ Թիֆլիսի նահանգի գիւղացիների համար գիւղատնտեսական դրամագլուխ հիմնելու մասին։ Վերոյիշեալ նախագիծը կը ներկայացվի հաստատութեան օրէնսդրական կարգով։ Մի և նոյն ժամանակ այդ խորհրդի մէջ ֆինանսների մինիստրը այն կարծիքը յայտնեց, թէ շատ օգտաւէտ և ցանկալի կը լինէր վերոյիշեալ նախագիծը ընդունել ամբողջ կայսրութեան համար։

—

Մի յանձնաժողով, պրոֆէսոր Մենդելէեվի նախագահութեամբ, մայրաքաղաքի լրագիրների ասելով, քննում է այն հարցը, թէ պէտք է բէալական դպրոցներում ուսումն աւարտող աշակերտներին ընդունել համալսարանների ֆիզիքօ-մաթեմատիական և բժշկական ֆակուլտետները։

—

Պետրովսկ քաղաքի շրջակայքում այգիներ ունեցող մի քանի անձինք դիմել են կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան խնդրելով, որ ընկերութիւնը ուղարկի մի մասնագէտ՝ այդ այգիների մէջ յայտնված միլդիու հիւանդութիւնը բժշկելու համար։

—

Տպագրելով «Մշակի» այսօրվայ համարում, Պետերբուրգից ուղարկված «Նամակ խմբագրութեան», որը վերաբերում է մեր շնորհալի երգիչ Շահլամեանին, մենք սպասում ենք Շահլամեանի բացատրութեանը, և շատ ուրախ կը լինենք, եթէ այդ մեղադրանքը թիւրիմացութիւն դուրս գայ։

—

Մարաքաղաքի լրագիրները յայտնում են, որ դիտաւորութիւն կայ շուտով կազմակերպել մի չարժական մուզէում, անցյալադործութեան արհեստին վերաբերեալ։ Այդ մուզէումը պէտք է տեղափոխել քաղաքից քաղաք և մեծ գիւղեր՝ նպատակ ունենալով ծանօթացնել արհեստաւորներին անցյալադործութեան արդիւնքների և գործիքների կատարելագործութիւնների հետ։

—

ՔԱՆԱՔԵՌԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 25-ին կայացաւ ս. Յակովք եկեղեցու երէցփոխի ընտրութիւնը։ Ընտրութեան նախագահեց՝ գործակալ և տեղական դպրոցի հոգաբարձութեան նախագահ Զ. քահանայ Զաքարեանը։ Ընտրողական եղանակը միանգամայն ծիծաղաշարժ՝ և առանց մի որ և է նախապատրաստութեան էր։ Իւրաքանչիւր ոք իր մօտ եղածին էր ձայն տալիս։ Ծերունիները՝ աւելի համամիտ էին տարիքն անցածի ընտրութեան, քան մի երիտասարդի։ Սկզբում առաջարկվեցին 8 ընտրելիներ՝ և ձայներ հաւաքեցին։ Յանկարծ մի ծերունի մօտեցաւ նախագահին՝ և այդ 8 ընտրելիներից զատ, առաջարկեց 2 նոր ընտրելիներ։ Ընտրողները թողած այդ 8 անձանց որոշումը մի կողմ, ծերունու առաջարկածներով զբաղվեցին։ Խօսակցութիւնը լուրջ կերպարանքից դուրս գալով՝ աւելի հեգնական դարձաւ։ «Այն ինչին ընտրեցէք.—նա 14 տարի շարունակ «դուքանչի» է՝ հաշուետուութեան հետ լաւ գլուխ ունի՝ և բաւականին էլ մեղք. թող երեք տարվայ շրջանում եկեղեցական գործերով զբաղվի՝ և ապաշխարէ։» Երկար վիճաբանութիւններից յետոյ միաձայն երէցփոխ ընտրվեց Մը-կրտիչ Դաւոյեան 60-ամեայ ծերունին, որից յետոյ տեղի ունեցաւ 3 հաշուետուների ընտրութիւնը, մեր թեմի փոխանորդ Անանիա եպիսկոպոսի գրաւոր յայտարարութեան համաձայն։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են փետրվարի 28-ից. «Այսօր մեր հասարակութիւնը ճանապարհ գցեց Բագրատ վարդապետ Թաւաքալեանին, որ այդքան կարճ ժամանակամիջոցում կարողացաւ գրաւել Աղէքսանդրոպոլի ամբողջ հասարակութեան սէրն ու համակրանքը։ Այդ օրը Թաւաքալեան վարդապետի վերջին պատարագն էր, ուր և տեղի ունեցաւ հրաժեշտի քարոզը։ Մի անսովոր բազմութիւն՝ լցրել էր Աստուածամայր եկեղեցին և շրջապատել էր եկեղեցու ամբողջ չինութիւնը՝ վերջին հրաժեշտը տալու իր յաջորդին»։

—

ԿԱՐՍԻ շրջանի Բերնա գիւղից մեզ գրում են փետրվարի 24-ից. «Այսօր, գիւղական հասարակութեան ներկայութեամբ, վաղամեռիկ Լեոն վարդապետ Խօջայեանի մահվան տարեդարձի օրը, հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալի յիշատակին։ Հոգեհանգստից առաջ քահանան մի համառօտ քարոզ խօսեց, ընտրելով «Երանի, որ խորտի զաղբատն և զտանկն»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կ. Պոլսից գրում են մեզ. «Կերևի թէ Պոլսոյ եւրոպական դեսպանատունները սկսած են քիչ մը աւելի կենդանութեան նշան ցոյց տալ, թէպէտ Թիւրք կառավարութիւնը մեծ կարեորութիւն չի տար իրենց, այնքան կոտրած է աղդեցութիւններն։

«Թիւրք կառավարութիւնը Ռուսիոյ խոստացած նեղուցներէն ազատ մուտքի առաւելութիւններուն և ոչ մէկը գործադրած ըլլալուն համար, Պոլսոյ ռուսական դեսպանատունը կերևի թէ սկսած է փոխել իր տրամադրութիւնները։ Հաւանական է, որ այսուհետև աղդու դիմումներ տեղի ունենան դեսպանական մարմնին կողմէն»։

—

Բերլինի «Local Anzeiger» լրագիրը հաղորդում է, որ Բ. Դուռը՝ բաւական ժամանակ է ցանկանում է հեռացնել Փոքր-Ասիայից անգլիական և ամերիկական բոլոր միսիոնարներին։ Այդ լուրը կարօտ է ստուգութեան։

—

Ռէյտէրի գործակալութիւնը հաղորդում է, որ այն հայերը և Թիւրքերը, որոնք նախօրօք ձերբակալված էին Կ. Պոլսում Թիւրքաց Շերիֆ տօնի առիթով, այժմ արձակված են։

—

Անգլիական «Daily News» լրագրի թղթակցութիւնները ցոյց են տալիս, որ օգնութեան գործը կարողացել է, թէև ուշ, հասնել երկրի խորքերը։ Խարբերդից հաղորդում են, որ փող է բաժանված յիսուն և չորս գիւղի։ Դիարբէքիրում սպասում են անգլիական հիւպատոսի գալուն. շատերը մեռան քաղցից և հիւանդութիւնից։ Մարդինից հաղորդում են, որ նպաստ տրվում է կանօնաւոր կերպով։ Կանանց տուել են ձեռքի աշխատանք։ Վիրաւորվածները բժշկվում են։ Բայց կատարեալ օգնութեան համար պահանջվում են աւելի դրամական միջոցներ, քան թէ կան երկրի մէջ։

—

Մարտի 3-ին Անգլիայի նախկին մինիստր-նախագահ և ազատամիտ կուսակցութեան ղեկավար լորդ Ռոզբէրի, Լօնդօնի ուիթերորդ կլուբում տեղի ունեցած մի մեծ բանկէտի ժամանակ, մի նշանաւոր ճառ արտասանեց այժմեան մինիստրութեան քաղաքականութեան մասին։ Նա կրիտիկայի ենթարկեց Սալսբիւրիի կառավարութեան արտաքին քաղաքականութեան բոլոր կէտերը և վայրկեանները և շատ երկար կանգ առաւ հայոց հարցում ցոյց տուած քաղաքականութեան վրա։

ԹԻԹՐԲԻԱՑԻ ԴԻՐՔԸ ԴԷՊԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

—

«Новости» լրագրի Կ. Պոլսի սեփական թղթակիցը հետևեալն է գրում փետրվարի 19-ից.

«Այսեղի մի քանի բարձրաստիճան անձերի կարծիքով, Նէլիդովի վերջին ուլտիմատումները առաջ են բերել սուլթանի մէջ հաստատ ցանկութիւն և մինչև անգամ պարտաւորութիւն՝ այսուհետև ոչ մի բանի չը ձեռնարկել ոչ եւրոպական Թիւրքիայում, ոչ էլ Փոքր-Ասիայում, առանց Ռուսաստանի խորհրդի։ Թիւրքիայի բոլոր յարաբերութիւնները Բուլգարիայի, Բալկանեան ուրիշ երկիրների և մի քանի օտար պետութիւնների հետ պէտք է թելադրվեն և ուղղութիւն ստանան Ռուսաստանից։ Ռուսաց կառավարութեան ձեռք բերած այդ արդիւնքը, պէտք է նկատել իբրև հետևանք Ասիայում տեղի ունեցած վերջին դէպքերի, որոնք Թիւրքիան Ռուսաստանին ենթարկված վիճակի մէջ դցեցին։ Այսուհետև Բ. Դուռը չէ կարողանալու որ և է լուրջ քայլ անել, առանց նախապէս համաձայնվելու Պետերբուրգի հետ, մինչև անգամ այնպիսի խնդրի առիթով, ինչպէս եգիպտականն է։ Իշխան Ցէրդինանդին ճանաչելը, բուլգարական և մակեդոնական պահանջներին լիութիւն տալը, մի խօսքով ամեն բան պիտի համաձայնեցնվի ռուսաց կառավարութեան դիտումների հետ։ Այդ գիջողութեան փոխարէն, Ռուսաստանը խոստացել է Թիւրքիայի հանգստութիւնը և ապահովութիւնը։

«Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այս քաղաքական կացութիւնը սաստիկ յուզմունք է յարուցանում աւստրիական և անգլիական դեսպանատներում, որտեղ հաստատում են, թէ օսմանեան կառավարութիւնը անմիտ աճուրդ է կընքել Ռուսաստանի հետ։ Սակայն սուլթանը ուշադրութիւն չէ դարձնում այդ խօսակցութիւնների, ինչպէս և այն մի քանի պալատականների առարկութիւնների վրա, որոնք չեն համակրում ռուս-թիւրքական բարեկամութեան դաղափարին։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Daily Telegraph» լրագիրն ասում է, որ Կրիսպի իր քաղաքականութեամբ մահացու հարուած հասցրեց Իտալիային։ Այժմ երեքպետեան դաշնակցութեան երրորդ անդամը մի և նոյն է թէ մեռաւ և ոչ մէկ մինիստրութիւն չէ կարող նրան կենդանութիւն տալ։ Գերմանիան այժմ նոյնպէս առանձնացած է և Գերմանիայի դաշնակցութիւնը Աւստրիայի հետ չէ կարող արդեօք լինել Ֆրանսիային՝ վերադարձնելու Էլզաս և Լոտարինգիան։ Վերջաբանութեան մէջ լրագիրը շնորհաւորում է Անգլիային, որ նա առաջվան պէս ազատ է որ և է պարտաւորութիւնից։

—«Times» լրագիրը այն կարծիքն է յայտնում, որ իտալացիների կրած պարտութիւնը Աբիսինիայում ընդհանրապէս մեծ հարուած հասցրեց եւրոպացիների հեղինակութեան Աֆրիկայում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԳՐՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

—

Ցաւ։ Սոսկալի դարշահոտութիւն, գորտերի անտանելի կռկռոց... Գրական «ճահիճը» տակն ու վրա է եղել, և ամեն մի օրինաւոր մարդ ակամայ ները խփած և քիթը բռնած, երեսը դարձնում է, որ չը զգայ այդ սոսկալի դարշահոտութիւնը, այդ անտանելի գորտային կռկռոցը...

Նոյն իսկ այն անձինք, որոնց պատկանում է գրական «ճահիճ» ստեղծելու պատիւը, անկասկած կը յայտնեն իրանց անբաւականութիւնը Աբգար Յովհաննիսեանին, որը այնքան հեռու է գնացել իր նոր դինակիցների հետ... Ցեռնված բան է գրականութեան մէջ մի այնպիսի... ինչպիսին է «Արձագանքի» № 26-ի մէջ տպած նամակը Ստեփան Մալխասեանի դէմ... և կամ Բարեգործական ընկերութեան նիստի այն նկարագրութիւնը, որից լաւը գուցէ միայն կարող է գրել Բրուսայի այլ և Եգիպտոսի պատգամաւորի արժանաւոր հին բարեկամը...

—

Ցեղն է։ Ո՞վ էր խնդրում քար նետել այդ գրական «ճահիճի» մէջ, տակն ու վրա անել նրան, որպէս զի դարշահոտութիւնը վարակի ամբողջ մթնոլորտը։ Կան մարդիկ, որոնց հետ մի ժողովում նստելը, մի կուրի տակ լինելը՝ արդէն այնպիսի մեծ յանցանք է, որ այդ յանցանքը քաւելու համար պէտք է պատրաստ լինել ամեն տեսակ հայհոյանքներ լսելու, ամեն տեսակ կեղտոտութիւնների ականատես լինելու։ Խեղճ Բարեգործական ընկերութիւն... Ճիշդ է ասում ժողովրդական առածը, թէ «մի սատկած մուկը ամբողջ կարաս կը մուռտարի»։

—

Կան հիւանդութիւններ, որոնց բժշկելու և ոչնչացնելու համար պէտք է նրան մօտենալ, ուսումնասիրել, և այնպէս ոչնչացնել։ Բայց կան հիւանդութիւններ, ինչպէս ժանտախտը, որին ոչնչացնելու համար միայն մի ելք կայ, այն է նրան կղզիացնել, նրանից փախչել։ Այդպէս է ֆիզիկական ախտերի աշխարհում, այդպէս պէտք է լինի և բարոյական ախտերի աշխարհում։ Հայոց փողոցային մամուլը, իր վարձկան, մտաւորապէս պոռնկացած հերոսների հետ միասին իրանից մի այնպիսի բարոյական ախտ է ներկայացնում, որ նրան ոչընչացնելու համար հարկաւոր է ոչ թէ նրա հետ ընկերանալ, նրան մօտենալ, այլ նրանից երես դարձնել, նրանից փախչել, նրան կղզիացնել։

Հանդուցեալ Գրիգոր Արծրունին այդպէս վարվեց, երբ կամեցաւ ոչնչացնել հայոց փողոցային օրգաններից մէկը, որը ոտի տակ տուած ամեն մի սրբութիւն, աջ և ձախ վարակում էր, իբրև մի բարոյական ժանտախտ։ Եւ նպատակը իրագործվեց։ Անտես առնելով այդ բարոյական ժանտախտը, այդ փողոցային մամուլը՝—կարելի եղաւ տապալել նրան և նա այժմ մահվան տագնապի մէջ է։ Նոյնը պէտք է անել նրա արժանաւոր դաշնակցի, նրա հաւատարիմ ընկերակիցների հետ, որոնք արդէն սկսել են գերազանցել իրանց նախատիպին...

Նորերս «Биржевыя Вѣдомости» լրագիրը առաջարկում էր նույն միջոցով, այն է ընդհանուր արհամարհանքով ոչնչացնել ռուսաց խաբամիտ մամուլի այնպիսի ներկայացուցիչներին, ինչպէս է իշխան Մեշչերսկին, որը ենթարկվեց ծեծի երկու երիտասարդների կողմից, որոնց հորը նա ոչ միայն վիրաւորել, այլ ուղղակի մատնել էր՝ տղագրական խօսքի միջոցով։

—

Ցիչում Էք անմահ Գեօթէի խօսքերը, որով նա մխիթարում էր իր մի բարեկամին, երբ սա գանգատվում էր փողոցային մամուլի էջերում երևացած ստերի, զրպարտութեան, ինսինուացիոների և մատնութեան դէմ։ «Արհամարհեցէք այդ տեսակ մամուլը.—անդադար կրկնում էր Գեօթէն,—և անտես արէք նրան, եթէ մինչև անգամ մի օր կը գրեն ձեր մասին թէ գողք ճաշի ժամանակ արծաթէ գդալներ էք գողացել»։

Թող Գէօթէի այդ հեղինակաւոր խօսքերը ուղեցոյց լինեն հայոց ինտելիգենցիայի և մամուլի ազնիւ, մաքուր գործողների համար, որոնք երբեմն-երբեմն, երբ փողոցային մամուլը իր զրպարտութիւնը և կեղտոտութիւնները հասցնում է ծայրահեղութեան, վրդովված զարմանում և նույն իսկ փորձում են պատասխանել... Թող միայն լաւ յիշեն, որ վարձկան լրագիրները, և իրանց գրիչը ծախող մարդիկ (?) իրանց համար անսահման մեծ պատիւ են համարում հէնց այն, որ օրինաւոր մարդիկ իրանց հետ նստում են մի ժողովում, կամ վէճի են բռնվում մամուլի միջոցով։ Դրանք արժանի չեն այդ պատիւին։ Փառք Աստուծոյ, խամ դիտենք թէ ինչ «պատուներ» են դրանք բոլորը, իրանց «մեծից» սկսած մինչև «փոքրը»։

Ցիչեցէք Գեօթէի խօսքերը...

ԳՐՈՂ.

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 մարտի։ Բարձրագոյն ուկազներով ֆինանսների մինիստրի օգնական Անտոնովիչին հրամայված է լինել ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան անդամ. պետական քարտուղարի օգնական Կոկովցէվին հրամայված է լինել ֆինանսների մինիստրի օգնական։

ՀՌՈՄ, 4 մարտի։ Մարտի 2-ին բանտից արձակվեցին Դէֆէլիչիէ, Բօսկո և Բամբատո պատգամաւորները։

Խաղաղութեան դաշն կապելու համար Մէնէլիքի հետ սկսած բանակցութիւնների մասին «Italie» լրագիրն ասում է. «Մայոր Զալցային լիազորութիւն էր տրված լսել նէգուսի առաջարկութիւնները, եթէ որ նա ցանկանար խաղաղութեան դաշն կապել։ Բանից դուրս եկաւ, որ Մէնէլիք տրամադրված է հաստատել։ Մայոր Զալցան հաղորդեց նէգուսի պայմանները գեներալ Բալդիսէրային, որը այդ պայմանները ներկայացրեց մինիստրութեան հայեցողութեանը, իսկ վերջինը լիազորութիւն տուեց Բալդիսէրային շարունակել բանակցութիւնները։ Բալդիսէրա գեներալի հաղորդած տեղեկութիւնների համեմատ, Մէնէլիք պահանջում է, որպէս զի Իտալիան պարտաւորվի սրանից յետոյ այլ ևս ոչ մի ամրութիւն չը կառուցանել Էրիտրէում, որին Բալդիսէրա ինքն իր կողմից պատասխանեց, թէ դա մի անիրագործելի պահանջ է։

ՀՌՈՄ, 4 մարտի։ «Fanfulla» հաւատացնում է, որ ինքն Մէնէլիքը ցանկացաւ վերանորոգել բանակցութիւնները խաղաղութեան մասին, միայն պայման դրեց, որպէս զի Էրիտրէյան կօլոնիայի սահմանը դէպի հարաւ-արևմուտք կազմեն Մարաբեան լեռները։ Նէգուսը խոստացաւ գերիները յանձնել և զինուորական բոլոր պատիւներով արձակել ադիգրատեան բերդապահ զօրքը։ Դէպի հարաւ-արևելք սահմանը պէտք է անցնի մինչև Սինաֆէ, որը մնում է իտալական սահմաններում։ Ադուա-Ադիգրատ գիծը կը մնայ արիսինիացիների ձեռքում։ Տիգրէ կը դառնայ անկախ նահանգ, որը կը կառավարի դէպի Իտալիան բարեկամաբար տրամադրված արիսինիացի սատիճանաւորը։ Շուայցիները դաշն են կապում իտալացիների հետ՝ դէրվիշների դէմ գործելու համար։

«Tribuna» լրագիրը հաղորդում է, որ գերի են առնված 48 օֆիցէրներ և 600 զինուորներ։

«Ital. Milit.» լրագիրն ասում է, որ Ադուի մօտ պատերազմող իտալացիներից վերադարձան 20%. Լրագիրը մանրամասն է անում իտալացիների քաջութեան վրա, որոնք մեծ մասամբ ընկան պատերազմի դաշտում։

ՀՌՈՄ, 4 մարտի։ Մասսաուայից հեռագրում են, որ զինուորական գործողութիւնները կարելի է դադարեցրած համարել։

ԿԱՅԻՐԷ, 4 մարտի։ Դոնգոլա գնացող էկսպէդիցիան բաղկացած կը լինի 8,000 հոգուց։

Կ. ՊՕԼԻՍ, 4 մարտի։ Իշխան Ֆէրդինանդի գաղուստը նշանակված է մարտի 14-ին։ Իշխանը կը մնայ այստեղ մի շաբաթ։

ՊԱՐԻԶ, 5 մարտի։ Պատգամաւորների ժողովում շարունակվում էր համաշխարհային ցուցահանդեսի նախագծի քննութիւնը։ Զեկուցանողը դժգոհութիւն յայտնեց, որ կառավարութիւնը՝ ցուցահանդեսին մասնակցելու համար հրաւէրներ ուղարկելով պետութիւններին, զրկեց պարլամենտը ցուցահանդէսը սկզբունքով մերժելու հնարաւորութիւնից։ Հոեսորը անհրաժեշտ է համարում սահմանափակել ցուցահանդէսը Սենայի ձախ ափով, բացի Տրոկադէրոից։

ԿԱՅԻՐԷ, 5 մարտի։ Նորատաֆֆորդշիրեան գունդը և եգիպտական մի քանի բատալիոններ ուրբաթ օրը ջրային ճանապարհով գնալու են Վադիդալֆա, որտեղից զօրաբաժինը կերթայ անապատի միջով Դոնգոլա։

ԿԱՅԻՐԷ, 5 մարտի։ Ցատուկ աղբիւրներից ստացված տեղեկութիւններից երևում է, որ Սուդանում տիրող անպայման հանգստութիւնը աւելի ևս սաստկացնում է ընդհանուր յուզմունքը։ Խալիֆ Աբդուլլահ կորցրել է իր ամբողջ հեղինակութիւնը և յարձակողական ոչ մի գործողութեան չէ կարող ձեռնարկել։ Կարծում են, որ առաջիկայ պատերազմական գործողութիւնների նպատակն է աքսորել դէրվիշներին Հասարակածային շրջանից։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 5-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ	. .	94 ր.	20 կ.
Բերլինի վրա 100 մարկ	— . .	45 »	95 »
Պարիզի վրա 100 ֆրանկ	— . .	37 »	30 »
Ոսկի — — արժէ	. .	7 »	50 »
Մաքսային կուպոններ	— .	149 »	— »
Բօրսային դիսկոնտ	— . .	$7^1/_2$ »	— »
4% պետական բէնտա	. . . . .	$97^3/_4$ »	— »
Երբէն 5% առաջին փոխառութ.		285 »	— »
— — երկրորդ	—	$254^1/_4$	—
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		218 »	25
5% պետական երկաթուղ. բէնտա.		100 »	—
4% Նեղբէն փոխառութեան	. . .	$97^3/_4$	—
$4^1/_2$% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		$100^1/_8$ »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.			
$4^1/_2$% վկայակ. գիւղ. հող. բանկի		$100^1/_8$ »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մ.տա.		— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			
ընկերութեան օբլիգացիաները		$101^3/_4$ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ		101 »	50
Օդէսայի — —		100 »	50 »
Թիֆլիսի — —		$98^3/_4$ »	— »
Թիֆլիսի կալ. բանկի 6%	— . .	100 »	50 »
5% — — —	. .	$99^1/_2$ »	— »
Քութայիսի — 6%	. .	100 »	50 »
5% — — —	. .	$99^1/_2$ »	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՕՆ

Կիրակի, մարտի 10-ին

Հայ դերասանական ընկերութիւնը, մասնակցութեամբ տ. Զաբէլի

Ց. ՕՀԱՆԵԱՆԻ

Առաջին դէբիւտի համար կը տայ

ԳՐԱԿԱՆ-ԴՐԱՄԱՏԻՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Կը ներկայացնեն

ԳԱՂՏՆԻՈՅԺ

Դրամա 5 արարուածով, հեղ. Շպաժինսկի, թարգմ. Ց. Տէր-Գէորգեան

Տեղերի գինը սովորական է։

Սկիզբը երեկոյեան 8 ժամին։

(№ 28) 1—2

ՆԿԱՐՈՒՄ եմ աղլասի վրա, յայտնի հայ մարդկանց և զանազան ցանկացողների պատկերները։ Բազմոցի ԲԱՐՁԻ ԵՐԵՍԻ համար 3—5 ռուբլի. ԼՈՒՍԱՄՓՈՓ—մետաքսեայ կտորների վրա՝ 6 հայ գործիչների պատկերներով, 3—4 ռուբլի. ՄԵՏԱՔՍԵԱՅ ԹԱՇԿԻՆԱԿՆԵՐ 60 կ.—1 ր.։ ԺԱՊԱՒԷՆՆԵՐ վերոյիշեալ պատկերներով 20—25—30 կօպ.։ Ցանկացողներին կարող եմ ուղարկել ամեն քաղաք։

Դիմել այս հասցէով՝ ТИФЛИСЪ, Кочубѣевская у. д. Дробышева, № 21. А. РОДІОНОВОЙ.

(№ 28) 1—4

«ԵԱՍԼԻ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Ընդունվում են սուբ-վարակիչ հիւանդութիւններով (կարմրուկով, ծաղիկով, քսութչով, դիֆտէրիտով) հիւանդացած երեխաներ։ Ծծկեր երեխաները կարող են ընդունվել իրանց մայրերի կամ դայեակների հետ։ Ընդունելութիւնը ամեն օր։ Բժշկութիւնը և խնամատարութիւնը ձրի է։ Հասցէն Վէրա, Ծղնէտսկի փողոց, տուն Խալեապինի։ (№ 9) 9—10

Գրքերի տեղեկագիր № 100

Խանութի տեղեկագիր № 181

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ
Ն. Յ. ԲՈԶԱՐՋԵԱՆՑԻ

Գոյութիւն ունի 1858 թուականից

ԳՈՐԾԱՐԱՆՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

ՓԱՍՏԵՒ ՈՉ ԻՆՔՆԱԳՈՎՈՒԹԻՒՆ

Ցանցանք համարելով ի վնաս ծխողների թանգացնել և գեղեցկացնել ծխախոտի արկղները և փաթեթները *), ես աւելի լաւ եմ համարում պարոններ ծխողներին տալ բարձր տեսակի ծխախոտ, քան արտաքուստ գեղեցիկ փաթեթներ։ Խնդրում եմ ուշադրութիւն դարձնել մեր բոլոր արտադրութիւնների վրա. Նրանց յատկութիւնը բարձր է ամեն մրցումից և նրանք արժանի են ուշադրութեան՝ իրանց բարձր յատկութեամբ, որին կարելի է հասնել միայն աշխատելով և ծախս անելով, միայն ծխախոտի յատկութիւնը լաւացնելու և ոչ թէ արտաքին փաթեթները գեղեցկացնելու վրա։ Պարոններ ծխողներին խնդրում եմ փորձել անձամբ և համոզվել։

1896 Թ. ՅՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԾԽԱԽՈՏՆԵՐԸ ԵՒ ԳԼԱՆԻԿՆԵՐԸ

ՊԱՊԻՐՈՍՆԵՐ	ՊԱՊԻՐՈՍՆԵՐ	ԾԽԱԽՈՏ
(Գլանիկներ)	(Գլանիկներ)	
ՇԱԳԱՆԱԿԱԳՈՑՆ Ֆրանսիական թղթից, քիմիապէս հետազօտված № 5 „ԷԿՍՏՐԱ“	ՍՊԻՏԱԿ թղթից № 36 ԻԻԺՆԸՑԱ	Կովկասեան, սկսած 48 կօպէկից մինչև 3 ռուբլի ֆունտը։ Մաքուր տաճկական, թիթեղեայ արկղների մէջ, սկսած 4 ռուբլիից մինչև 12 ռ. ֆունտը։
25 հատը 15 կ., 100 հ. 60 կ.	10 հատը 3 կօպ.	
25 հատը 25 կ., 100 հ. 1 ռ.		

ԾԽԱԽՈՏ ՏԱՃԿԱԿԱՆ ՍԵՐՄԵՐԻՑ ՖՈՒՆՏԸ 1 ՌՈՒԲԼԻ 52 ԿՕՊԷԿ

կարելի է ստանալ ամեն տեղ։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են արագ և ճշդութեամբ։

Ցարգանաք՝ գործարանատէր Ն. ԲՈԶԱՐՋԵԱՆՑ

*) Թանկագին փաթեթները և արկղը միայն վնասում են ծխախոտի լաւ յատկութեան։ (№ 28 ե. յ.) 1—5

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ

ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Ցնային գործածութեան համար)

ՍՄԲԱԿԱՑԻՆ ՁԷԹ, սմբակները պնդացնելու կակղացնելու և սնացնելու համար։ Նա պահպանում է սմբակները ճաքճքելուց և նպաստում է նրանց կանոնաւոր աճման։ Սրուակի ԳԻՆԸ՝ 60 կ.
» » » 1 ռ.

ԿԱՇՈՒԻ ՕԾԱՆԵԼԻՔ, կակղացնում է ամեն տեսակ կաշի, պահպանում է նրան խոնաւութիւնից և ցորտոսումից, չինում է նրան անթափանցելի և ճկուն. այս օծանելիքը անփոխարինելի է որսորդական և ուրիշ կօշիկների, շոիբլէտների, սանձերի, ձիի սարքի, չէմոդանների և ուրիշ կաշուէ առարկաների համար։ ԳԻՆԸ՝ 75 կօպ.։

ԹԱՄԲԱՅԻՆ ՍԱՊՕՆ (յատկապէս սպիտակ կաշուց չինած թամբերի համար)։ Գործ է ածվում մեծ աջողութեամբ ամեն տեսակ սպիտակ և զանազան գոյների կաշի մաքրելու։ ԳԻՆԸ՝ 1 ռ. 25 կ.։

Ծախվում է դեղարարական և կաշեղէն ապրանքների խանութներում։

Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված՝ դեղատան ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու։

(№ 22) 3—50

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ

ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Ցնային կարիքների համար)

ՊՕԼԻՏՈՒՐԱ «ԿԱՑԾԱԿ»։ Մի քանի ռօպէում նորոգում է հին, անշնորհ, խաղխազած կահկարասիքը, պիանինօ, ռոյալներ, հայելիի և ուրիշ չրջանակներ, արկղիկներ, տփիկներ և այլ յղկած փայտեայ առարկաներ—չը դիմելով ատաղձագործի կամ ողորկողի օգնութեանը։ ԳԻՆԸ՝ 1 ռ.։

ՏՕԿԱՅԵԱՆ ԲԱԼԶԱՄ—միջոց ոտքի կոշտերից (մօզոլներ), ելունդներից և կաշուէ այլ ուռոյցներից։ «Տօկայեան բալզամը» առողջացնում է ոտի կոշտերը, ելունդները և այլն, ամենակարճ ժամանակում. արմատներով ոչնչացնելով նրանց, նա, սակայն, ոչինչ ցաւ չէ պատճառում։ ԳԻՆԸ՝ 60 կօպ.։

Ծախվում է դեղարարական խանութներում։

Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված դեղարարական ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու։

(№ 22) 3—50

ԿԱԿԱՕ ԲԼՕԿԼԻՐ

ՍՆՆԴԱՐԻՐ ԹՄԻԶՔ, արկղիկներում, $^1/_1$, $^1/_2$, $^1/_4$ և $^1/_8$ կիլօգրամ։ (GRAND PRIX) Բարձրագոյն պարգև։ Անտվերպէնի 1894 թուի համաշխարհային ցուցահանդիսում։

Գլխաւոր պահեստը՝ դեղարարական ապրանքների Բարձրագոյն հաստատված Կովկասեան ընկերութիւնը Թիֆլիսում։ (№ 6) (Ե) 8—50

„ՄՇԱԿԻ“ ԹՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը

		Գինը
1)	ԷՎԷԼԻՆԱ, Գրիգոր Արծրունու	50 կօպ
2)	ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ, Գ. Արծրունու	20 »
3)	ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալումեանի	50 »
4)	ՍԱՍՈՒՆ, Ա. Քալանթարի	20 »

Օտարաքաղաքացիները կարող են վճարը փողի տեղ ուղարկել պօստային մարկաներով։ (№ 59) 10—10

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Марта 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 2а.